

քին մէջ, և երբ ծուխը փարատեցաւ՝ զինուորներն սկսան զարմանքի ձայներ հանել, մէջերնին ճերմակ պարեգօտ մը, կնկան գլխարկ մը, մատաղ սիրուն տեսքով աղջիկ մը տեսնելով՝ որ պռուշնուն չնայելով առաջ կ'երթար:

Զրահաւորելոյ ջոկատ մը առաջնէրէն մէկուն օգնութեան կը հասնէր. գնդապետը գետին տապըլտկեց զթերեզա, բայց մէկէն թեւէն բռնելով գետնէն հանեց, ու երգուննալով հայհոյելով առանց տեղեկանալու թէ ինչ գիպուածով աղջիկ մը պատերազմին բանակետդին վրայ կը գտնուէր, երկու զինուորաց ձեռքը տուաւ յանձնելով որ կանանց կողմը տանին:

Պէտք եղաւ որ զրահավառի մը ետեւէն լերան գլուխն ելլէ՝ և այսպէս դէպ 'ի հոն տարուեցաւ ուր որ Յովսէփինէ կայսրուհւոյն նաժիշտները կային բըլրան վրայ քանի մը զինակիցներով և իտալիոյ քաղաքաց երեսփոխաններով:

Թերեզա հոն որ ելաւ, վախճանին հասնելու մօտ էր, ու ալ չէր կրնար վրիպիլ: Շատ դժուարութեանց յաղթած ըլլալով՝ կուզէր վերջին դժուարութեանն ալ յաղթել. անոր համար երբոր կայսեր հետ ուղեց տեսնուիլ ու պատասխան տուին թէ զօրաց գլուխն անցած դաշտին մէջ ասդին անդին կը վազէ:

— Սղէկ ուրեմն, կայսրուհին կ'ուզեմ տեսնել, պողաց հաստատամտութեամբ: Բայց երկուքն ալ իրարմէ դժուարին խնդիրներ էին. որպէս զի չձանձրացընէ, աչքը վախցնել փորձեցին, բայց չկրցան: Պէտք է զօրաց դրիցը փոխուելուն սպասել ըսին. յանձն չառաւ և ուղեց դէպ 'ի դահը երթալ. արգիլեցին՝ դէմ կեցաւ, ուժգին մը պողաց ինչուան որ նաև վերջապէս Յովսէփինէի ուշադրութիւնն ալ իր վրայ արթնցուց:

Կը շարունակուի:

Լոկտորա քաղքիւն վիճակագրութիւնը.

Լոկտորայի մէջ ըստ հաւանական հաշուի 615 թղթատուն կայ, 137 հեռագրութեան պաշտօնարան, իսկ քաղքին թղթաբաշխները ընդ ամէնը 2,000 հոգի են: Հասարակաց կառքերու 229 կայան կայ, դարձեալ 20,000 գինետուն ուր անընդհատ ամեն տեսակ ըմպելիք կը ծախուին: Վաղէրջ ըսուած ամենէն երկայն կամուրջը 1,326 ոտք երկայնութիւն ունի, և Սուդհվօդ, որ էն կարճն է, 700 ոտք: Քաղքին երեւի կամուրջներէն մէկն Լոկտորն-Պոիճ ըսուածը, որուն շինութեանը համար 50 միլիոն ֆուանդ խարճուեր է, շատ անուանի է իրեն ընդարձակութեանը համար: Հաշիւ ըրած են որ 24 ժամուան մէջ, հետեակ և կառքով վրայէն անցնողներուն թիւը մինչև 167,900 հոգի եղեր է, որով մէկ ժամուան մէջ վրայէն անցնողներուն թիւը կ'ըլլայ 6,996: Ուրեմն ենթադրելով որ ամեն օր աս կամուրջին վրայէն 167,900 հոգի անցնին, ու կիրակի օրերը աս թուոյն կէսը միայն, ամբողջ տարին անցնողներուն թիւը կ'ըլլայ 59 միլիոն, Բրիտանեան կղզեաց գրեթէ կրկին բնակչաց թուոյն չափ: Օրուան մէջ կան այնպիսի միջոցներ որ աս կամուրջին վրայ միանգամայն 2,000 հոգիէն աւելի կ'ըլլայ: Իսկ 24 ժամուան մէջ միայն կառքերուն թիւը 20,498 է որ կ'անցնին կամուրջին վրայէն, որոնցմէ 4,483ը հասարակաց և մասնաւորաց կառքեր են, 4,340ը օմնիպոնս, իսկ 11,674ը սայլ են: